Մուղնեցոյն քահանայութիւն էր խնդրեալ, արգիլեալ էին վասն բանին. և այժմ զայս խնդրէ և մեք զի՛նչ արասցուք՝ ոչ գիտեմք, ասաց Տէրտէրս Վարդապետին: Եւ նա ասաց. Վասն է՞ր ի ժամանակին ոչ է եղեալ. և նոքա այլ իմն պատճառ եդին թէ Վասն մեզ ոչ են աւրհնեալ. և նա ասաց թէ Ոք այլ չեմ աւրհներ: Եւ կրկին եկեալ նոյնպէս պաղատանօք և աղաչանօք թէ Դուք չէք կամիր, թէ չէ կու լինի. այսպէս խօսքեր. եւ մեք ասացաք թէ Այլվի կու լինի ձեռնադրութիւն, կաց ի յայն ատենն եղի՛ր. և ասեն թէ Զէ՛, հիմի պիտիր. վասն է՞ր թէ մինչև յայն ժամանակն, ո՛վ գիտէ թէ ի՛նչ կու լինի. չարկամ ունիմ, լինի թէ չթողուն: Աղէ՛կ, ապա մեք ի՞նչ անենք, չենք կարեր ասել զբան որ իւրեան համար կ'ասեն: Յետոյ կրկին աղաչեցին պաղատեցան թէ Զայս բանն արէք: Գնաց Տէրտէրս Վարդապետին ասաց, և նա ասաց թէ Ես չեմ. ահա՛ պիտի որ ձեռնադրութիւն՝ ես մի թէսքէրէ տամ որ զինք այլ աւրհնեն: Եւ գնացաք ասաք զայս թէ Այսպէս ասաց, այլ ի՞նչ կ'ուզէք: Եւ ահա՛ մեր Յարութիւնն այլ մնաց. գնացին ճորով թէ Լաւ էր որ այժմ լինէր: Եւ զսորա քոյրն առնողն որ Սուրբ Նիկողոսցի էր՝ զաթոռին առած, զրկած աւագիրիցովն թէ Աւրհնեն. նա այլ չարաւ: Օրս Վարդապետն ասէր Տէրտէրիս թէ Բե՛ր որ աւագ սարկաւագ օրհնեմ՝ նուաստիս համար, եւ Տէրտէրս ոչ է տվեալ կամք, և երեկունս ասաց ինձ Տէրտէրս, և ես այլ չկամեցայ, քանզի կարողութիւն պիտի քաշելու: Այս բանիցս և խօսիցս ժամանակն, յետ ժամուն ելնելուն էր, անձրև եկաւ խիստ, ի հոն մնացաք ես և Տէրտէրս և Գէորքն:

Ի Դ ժամուն (13 Ապրիլ Կէր.) ելաք եւ գնացաք յեկեղեցին. և եղև ժամն, և Մարտիրոս վարդապետն քարոզ ասաց զաւուր խորհուրդն, որ թէ վասն է՞ր